

Սևան համայնքի ավագանու շնորհավորանքը

Չարգելի սևանցիներ

Պատմություն է դառնում ևս մեկ տարի՝ 2010թ-ը: Համոզված ենք, որ այն ձեր կյանքում ունեցել է իր կարևորագույն տեղը, հասցրել եք շատ ձեռնարկներ կյանքի կոչել, գրանցել ուրախ ու հիշարժան պահեր:

Առջևում 2011թ. է, որը մեզ խոստանում է լինել արգասաբեր ու բարենպաստ: Դիմավորենք Նոր տարին լավագույն ցանկություններով ու համայնքապահպան մտահղացումներով:

Թող յուրաքանչյուրն իր աշխատանքով ու ձգտումներով այսուհետ էլ նպաստի իր ընտանիքի, համայնքի բարգավաճմանն ու զարգացմանը:

Թող 2011թ. բերի անսպառ լույս ու հավատ, լավատեսությամբ լցնի մեր շուրջը:

Մաղթում ենք բոլորիդ երջանկություն, առողջություն, բարեկեցություն ու արգասաբեր տարի: